

պայծառ գոյներով գորգեր փռելու մասին է ճաշ սարքելու, յարդարելու համար: «Կաղմեաց» կամ «կաղմեյ» յաճախ կը հանդիպինք հին հայ խաչքարերու յիշատակարաններուն մէջ, ինչպէս «Սուրբ խաչ բարեխաւս Մեղիքիսէթ քահանային՝ թվ(ին) ՌԻԹ (1580) կաղմող Մեղիքիսէթ»⁽³⁰⁾: Կամ «Սուրբ խաչս բարեխաւս է Ուղուրին, Քիրամ կաղմող, թվ(ին) ՌԻՄ (1602)»⁽³¹⁾: Դարձեալ «Սուրբ խաչս բարեխաւս Մէլիք Աղային եւ իւր ծնողացն, թվ(ին) ՋՂԸ (1549): Մէլիքսէթ կաղմող»⁽³²⁾: Դարձեալ նոյն կաղմողէն կան ուրիշներ⁽³³⁾ կը յիշուին ուրիշ կաղմողներ. «Ես Աւանէս կաղմեցի»⁽³⁴⁾: Երկու խաչքարերու վրայ ալ, մին 1541էն, կը հանդիպինք «Յակոբ նկարող», այսինքն գծող, յարդարող, կաղմող խաչին քանդակներուն: Հետաքրքրական է նուրբ խաչքարի մը սա արձանադրութիւնը. «...ՌԻԳ (1605) Փիւհամզէս տանուտէր գորով ոսկող տանս Գեղամայ ետու կաղմեյ տապանս եւ նկարել զխաչս, որք կարգայք, յիշեցէք»⁽³⁵⁾: Հոս «կաղմող» եւ «նկարող» կը տարբերին, եւ «տապան կաղմեյ» կընայ միայն յարդարել նշանակել:

Ինչպէս ըսի՝ մենք դեռ մեր ազգային նիւթերուն ուսումնասիրութեան սկիզբն ենք, անդին տակաւին լոյս չտեսած ահագին հում նիւթեր կան որոնցմէ դեռ չենք օգտուած: Միայն նման նիւթերու մանրակրկիտ հրապարակուելը կընայ նման շատ մը մթին կէտեր լուսաբանել եւ վերջնականապէս ճշդել:

Գուցէ մանրակրկիտ պրպտում մը մեր մատենագրութեան բոլոր ճիւղերուն մէջ՝ կարենայ մեզի հայթայթել շատ աւելի նիւթ: Առ այժմ ես կը գործածեմ ինչ որ ձեռքիս տակ տրամադրելի ունիմ: Օրինակ ներսէս Շնորհալի կ'ըսէ.

Ուր մեծամեծքն ի բազմոցի,

Կամ ուր սեղանն ամենալի,

Ուր են ազատքն ի տանալի,

Կամ տեսնորդիքն ի ծաղկոցի:

Կը համարիմ որ առաջին տողին բազմոցին՝ բազմականին տեղ գործածուած ըլլայ տաղաչափական պատճառներով:

Թէ որքան կարելոր տեղ մը ունի գորգը հայ աղնուականին տան մէջ՝ մենք կը գտնենք Հայաստանի տիրող օտարներուն համար եղած վկայութենէն: Ապու'լ Ֆարաճ կը պատմէ թէ Ղըլըճ Ասլանի ազջիկը Խլաթի Խաթունը իր Պաղտատ այցելութեան կը զբաւէ սիրտը Նասիր Ապու Ալ-Ապպաս Ահմատ Խալիֆային (մեռած 1125ին) որ Խլաթի Խաթունը հայրենաբաղձ չընելու համար կը հրամայէ նէրա Խլաթի

(30) Տեղեկագիր Գեղարքունի: Մես. Արքեպոս. Սմբատեանց, Էջմիածին, 1895, էջ 324:

(31) Անդ, էջ 494:

(32) Անդ, էջ 494:

(33) Անդ, էջ 531:

(34) Անդ, էջ 532:

(35) Անդ, էջ 494-495: